

Ժողովին նախագահելու համար, ութ եպիսկոպոս է ձեռնադրել:

Ձեռնադրութեանը ներկայ են եղել բազմաթիւ անձինք, լատին եպիսկոպոսներ, ուսուցչապետներ, բժիշկներ, ճարտարապետներ և զանազան կրօնական միաբանութիւններից ներկայացուցիչներ:

Հայ կաթողիկ եպիսկոպոսների ժողովը Հռովմում.

Հայ-կաթողիկ եպիսկոպոսների ժողովին մասնակցելու Հռովմ գնացող Սեբաստիայի և Խարբերդի Քէչէճեան և Իսրայէլեան եպիսկոպոսները պատերազմի պատճառով կառավարութիւնից արգելոււմ են Կ. Պօլսում. սակայն նրանք Հայ-կաթողիկ պատրիարքարանի միւս կողմի դռնից դուրս գալով՝ առաջուց պատրաստել տուած անցադրելով փախուստ են տալիս. Սիրքէճի մէջ պաշտօնեաներին համոզելով՝ որպէս թէ Վերինա են գնում. Իւկ Տիգրանակերտի Ձէլէպեան եպիսկոպոսը երբ պատրաստուում էր Հռովմ գնալ, արգելուել է Բէրութում:

Պատրիարքական փոխանորդի փոփոխութիւն.

Պատրիարքական փոխանորդ Ճամճեան եպիսկոպոսը տեսնելով, որ Թէրզեանի կողմից փոխանորդ է դրուած մի վարդապետ, (որի պաշտօնը թէև կառավարութիւնը չի ընդունում) հեռացել է իւր թեմը—Բրուսա:

ՌՈՒՍ ՊՐԱՆՈՍԼԱԻ ԵԿԵՂԵՅԻ.

Մի դատաւորիւնից մի այլ դատաւորիւն անցնելու օրինագիծ (Церк. Вѣст. № 45).

Պետական Խորհուրդը նոյեմբերի 4-ի նիստին սկսեց քննել մի դաւանութիւնից մի այլ դաւանութիւն անցնելու օրինագիծը, որ ներմուծուած էր Պետական Դուռայից. Կառավարութիւնը Պետական Դուռա էր մուծել դաւանութեան օրինագիծը 1905 թ. հոկտեմբերի 17-ի մանիֆեստի և նոյն թուի ապրելի 17-ի հրովարտակի ար-

տայայտած ուղղութիւնները հիմք ունենալով, Պետական Դուման նկատելի կերպով ընդարձակել էր կառավարութեան օրինագիծը, և 1905 թ. ապրելի 17-ի հրովարտակի սահմանից շատ հեռացել։ Այս հրովարտակով նախատեսուած էր պրաւօսլաւութիւնից միայն այլ քրիստոնէական դաւանութիւնն անցնելը, սակայն Պետական Դումայի նախագծով թոյլ է տրուում մտնել դաւանութեան, այդ թւում և ոչ-քրիստոնէական դաւանութեան և կապալաշտութեան անցնելը Յետ այնորիկ, Պետական Դումայի օրինագիծը կրճատում է ուրիշ քրիստոնէական դաւանութեան անցնելու համար 1905 թ. ապրելի 17-ի հրովարտակով սահմանուած ժամանակամիջոցը (չափահասութիւն), թոյլ տալով դրանից էլ առաջ, 14 տարեկան անձանց ուրիշ դաւանութեան անցնելը նրանց ծնողների համաձայնութեամբ։ Վերջապէս Պետ. Դուման իրաւունք է տալիս ծնողներին 14 տարեկանից պակաս դասակների դաւանութիւնն էլ կարգադրել։

Պետական Խորհրդում օրինագիծը քննելու համար ընտրուել էր առանձին յանձնաժողով, որի մէջ Դումայի օրինագիծը բոլորովին փոփոխուեց, մօտեցրուեց համարեա կառավարչական օրինագծի սահմանին։

Յանձնաժողովի մեծամասնութիւնը կրօնափոխութեան հիմնական խնդիրը դնում էր 1905 թ. ապրելի 17-ի հրովարտակի սահմանում, թոյլ տալով միայն մի քրիստոնէութիւնից միւսն, և ոչ այլ դաւանութիւն, անցնելը։ Յանձնաժողովի ծրագիրը, ժամանակամիջոցի վերաբերութեամբ էլ հետևում է 1905 թուի ապրելի 17-ի հրովարտակին, ընդհանուր կարգով պահանջելով դաւանափոխութիւնը կատարելու համար 21 ամեայ չափահասութիւն, միանգամայն և մեծամասնութեան ծրագիրը նոր միտք էլ է ներմուծում, որը չկար նախարարական և Դումայի ծրագրերի մէջ, այդ այն է որ կրօնափոխութեան յայտարարութիւնից յետոյ պէտք է 40 օր անցնի, որ կրօնափոխութիւնը կատարուած համարուի։ Պետական Խորհրդի Յանձնաժողովի ծրագրին կպցրած են աջակողմեան և ձախա-

կողմեան փոքրամասնութեան առանձին կարծիքները: Չախակողմեան փոքրամասնութիւնը, Ա. Ֆ. Կօնի-ի գլխաւորութեամբ ձգտում է էական կէտերում պահպանել Դուժայի օրինագծերի սկզբունքները, մինչդեռ աջակողմեան փոքրամասնութիւնը, Վարչաւայի Նիկողայ արքեպիսկոպոսի գլխաւորութեամբ, անհրաժեշտ է համարում օրինագիծը գլխովին մերժել:

Պետական խորհրդի նիստին առաջ գալով Ներքին Գործերի նոր նախարար Ա. Ա. Մակարովը, յայտնեց, թէ կառավարութիւնը պաշտպանում է մեծամասնութեան ծրագիրը: Նոյեմբերի 4-ին ընդհանուր վիճարանութիւնները չաւարտուեցին և պէտք է շարունակուեն նոյեմբերի 9-ին:

Դաւանափոխութեան խնդրի առիթով դնում ենք Պետական խորհրդի նիստերի հետեւեալ քաղաածքը, որ ուղարկել է խմբագրութեանս էմանուէլ քհն. Նազարեանը:

«Ռուսաստանի և ռուս կառավարութեան պատմական խնդիրը-քաղաքացիականը ու եկեղեցականը-ասում է Բարձր Սրբազան Նիկողայոսը,—կայանում է նրանում որ կարելի լինի ռսացնել այն ամենը, ինչ որ ռսացած չի և պրաւոսլաւ դաձնել այն ամենը, ինչ որ չի դառած պրաւոսլաւ: Մեզնում, Ռուսաստանում, մինչև վերջին ժամանակը, ամենքը համոզուած էին որ ճշմարտութիւնը դտնում է միայն պրաւոսլաւ դաւանութեան մէջ: Սրանից առաջ է եկել պետութեան ոչ հաւասարապէս վերաբերմունքը դէպի դաւանութիւնները: Այն միջոցին, երբ պրաւոսլաւ դաւանութեանը տրուած էին բոլոր միջոցները՝ նրանում արմատ գցելու և տարածուելու համար, մնացած դաւանութիւնները լոկ տանելի էին համարւում: Այս սխառէմի համար խորթ էր կրօնական անտարբերութիւնը, պետական սանտիմէնտալնութիւնը և իր ոտքերի տակ հող չունեցող ազատամտութիւնը,—գոչում է Բարձր Սրբազանը,—և միայն յեղափոխական ածխահոտը կարող էր բանը հասցնել այն աստիճանին որ մեզնում, Ռուսաստանում, յայտարարում է բոլոր դաւանութիւն-

ների ազատութիւնը, եղծւում է բոլոր անցեալը, և դւում է նոր իդէալ, նոր սկզբունք: Այս սկզբունքին փոխարինում է բողոքականութիւնը, կասեմ ձեզ, ինչքան ուզում էք, զարմանաք, — տալստոյական սկզբունքը: Սրանում ես ինքս համոզուեցի, կարգալով այս ամառ Ցալստոյի բոլոր արգելուած գրքերը՝ հաւատի ու պետութեան դէմ: Նրանց մէջ է յայտարարւում բոլոր դաւանութիւնների հաւասարութիւնը և անհրաժեշտ է համարւում՝ հանել պրաւոսլաւ դաւանութիւնը նրա իշխող վիճակից . . . »

Բարձր Սրբազանին պատասխանում են Մ. Ա. Ստախովիչը և Ա. Թ. Կոնին:

«Ոչ որ չի հաստատում, — ասում է Ստախովիչը, — թէ բոլոր դաւանութիւնները հաւասար են, բայց մենք ամենքս հաստատում ենք որ բոլորիս խղճերը հաւասար արժէք ունեն»:

«Երբ որ և է մեծ գործ, — ասում է Կոնին, — հիմնուած է սիրու վրայ և գործում է խաղաղութեան զէնքերով, նա փախենալիք չունի իր գոյութեան յարատեւութեան մասին: «Սիրու գործի մէջ, — ասում է առաքեալ և աւետարանիչ Յովհաննէսը — երկիւղ չկայ»:

«Բռնութեամբ իր գաւթում պահելը այն մարդկանց, որոնք, լսելով իրանց խղճի ձայնին, ցանկանում են գնալ ուրիշ, էլի քրիստոնէական դաւանութիւնը, չի յիշեցնում արդեօք այն օրգանիզմը, որի ցաւը արտաքին միջոցներով ներս է մտել: Այդ ցաւից տանջուած օրգանիզմը, դժուար թէ աւելի ամրանայ . . . Այս դէպքում արգելք է հանդիսանում դրան ապրիլ 17-ի հրամանը, որի առաջին կէտում կտրականապէս ասուած է, թէ պրաւոսլաւ դաւանութիւնից հրաժարուելը չի ենթարկւում հաւածանքի և չպէտք է բերի իր ետեւից ոչ մի անձեռնտու հետեւանք»:

«Ռուսաստանում, 1812 թուականի հարիւրամեակի տօնախմբութեան նախօրեկին, մեր Հայրենիքի պատերազմի, որի սրբազան էջերում, փառաւոր ռուս անուն-

ների շարքում գրուած է, օրինակ, անունը այլադաւան Բարկլայ-Դը-Տօլլիի, որ այնպէս սրտաշարժօրէն երգել է Պուշկինը այն երկրում, որտեղ ֆինանսական մինիստրները եղել են բողոքականներ՝ Կանկրինը, Րէյտէրնը և Բունգէնը, որտեղ ռուս գիտութիւնը փայլեցրել է իր գրուածքներով հռչակաւոր Բերը, որտեղ ընտային գործում փայլում է մարդասէր կաթողիկ-դօքտօր Հաազը, որին Մոսկովան նոր ահա կանգնեցրել է յուշարձան...

Այն առաջարկը, որի մասին ես խօսում եմ, այն աստիճան անհամբերօղ է, սահմանում է այնպիսի նեղ հայեացք, որ նրան ընդունելը և օրէնքի էջերը մտցնելը արմատից է ոչնչացնում նոյն ինքը խղճի ազատութեան նախագիծը...

Առարկում է յետոյ և՛ Մ. Մ. Կավալիսկի:

Նրանից աւելի լինչը կարող է սոսկալի լինել եկեղեցու համար,—ազազակում է Կավալիսկին,—երբ պահում է իր մէջ այնպիսի մարդիկ, որոնք դաւանում են քրիստոնէական վարդապետութիւնը՝ լոկ յարմարութեան տեսակէտով: Այս պատճառով ես հասկանում եմ որ խղճի ազատութիւնը անբաժան կապուած է՝ մի դաւանութիւնից միւսը դիմելու ազատութեամբ, և նոյնքան անհրաժեշտ է պետութեան շահերի տեսակէտից, ինչքան և տիրապետող եկեղեցու շահերի տեսակէտից: Այս բանը շատ լաւ էին հասկացել Մեծն Եկատէրինէ և նրա ժամանակակից Մեծն Ֆրիդրիկոս, որոնք թողել էին իւրաքանչիւր անհատի կամքին՝ գտնել իր համար անձնական փրկութեան միջոցը: Վերջապէս, Տէրտուղիանօսը հաստատում է թէ հաւատը այն է, ինչ որ իւրաքանչիւր մարդպէտը է ընդունի իր համոզումով, և ոչ թէ, ենթարկուելով բռնութեան:

Մինչդեռ իշխ. Լաբանով-Ռաստովսկին աշխատում էր վերադարձնել դաւանափոխութեան օրինագիծը յանձնաժողովին, ինչպէս ցանկանում էին աջակողմեանները, ձայներ հաւաքելիս երևեցաւ, որ 101 ձայնով ընդդէմ 45-ի Պետական Խորհուրդը օրոշեց քննել օրինագիծը յօդուած առ յօդուած:

Զայներ հաւաքելիս Վարչաւայի արքեպիսկոպոս Նիկողայոսը դէմօնստրատիվ կերպով հեռացաւ դահլիճից»:

Նոյեմբերի 9-ին Պետական Խորհրդում վերջացել են դաւանափոխութեան առիթով ընդհանուր վիճաբանութիւնները և 101 ձայնով ընդգէմ 45-ին որոշուել է օրինագծի յօդուածները մէկ մէկ քննութեան առնել»:

— Նոյեմբերի 11-ի նիստում, ասում է «Перв. Вѣст.» № 46), երկար վիճաբանութիւնից յետոյ Պետական Խորհուրդը ընդունել է իւր առանձին յանձնաժողովի խմբագրական փոփոխութեամբ օրինագծի 1 և 2 յօդուածները. այն է.

Յօդ. 1. Մի քրիստոնէական դաւանութիւնից կամ հաւատից մի ուրիշ քրիստոնէութեան, իսկ նոյնպէս ոչ քրիստոնէութիւնից կամ հեթանոսութիւնից քրիստոնէութեան ու ամեն տեսակ ոչ-քրիստոնէական դաւանութեան կամ հեթանոսութեան անցնելը կատարուած է կրօնափոխ լինել ցանկացողի 21 տարեկան դառնալուց ոչ առաջ: Կրօնափոխութեան համար օրինական կարգով յայտարարութիւն տուողը, դաւանութիւնը փոխած և նոր ընտրած հաւատին յարած կը համարուի յայտարարութիւն տալուց 40 օրեայ ժամանակը անցնելուց յետոյ, երբ նոր հաւատի մէջ ընդունուած լինելու համար հաւատտադիր կը ներկայացնի»:

Յօդ. 2. նախընթաց (1.) յօդուածում յիշուած 40-օրեայ ժամանակը չի պահպանուում կրօնափոխ լինել ցանկացողի կեանքին սպառնացող ծանր հիւանդութեան դէպքում»:

Նոյեմբ. 11-ի նիստին ընդունուել է օրինագծի 4-րդ յօդուածը Պետական Խորհրդի առանձին յանձնաժողովի խմբագրական հետեւեալ փոփոխութեամբ. Մի և նոյն դաւանութեան ամուսիններից մէկի կրօնափոխ լինելու դէպքում 1-ին յօդուածի սահմանած հիմունքով ու կարգով, 21 տարեկան չդարձած զաւակները մնում են առաջին հաւատին, որ դաւանում է հաւատաւորի չեղած ամուսինը. երբ կրօնափոխ են լինում երկու ամուսիններն էլ, կամ

կենդանի մնացած ամուսինը. նրանց 14 տարեկան չդարձած զաւակները հետեւում են ծնողների կամ կենդանի մնացած ծնողի հաւատին վերջինի ցանկութեան համեմատ, այս հասակին հասածները մնում են նախկին հաւատին, բայց կարող են ծնողների համաձայնութեամբ անցնել այն քրիստոնէական հաւատին, որ գաւառում են նրանց ծնողները կամ կենդանի մնացած ծնողը, իսկ պրաւոսլաւ հաւատով մկրտուած զաւակները յամենայն դէպս ենթարկւում են 1-ին յօդուածով սահմանուած կարգին.

Նոյեմբ. 16-ին, ասում է Церк. Вѣст. № 47, վերջացել են Պետակ. Դուժայի ներմուծած կրօնափոխութեան օրինադրի յօդուած առ յօդուած քննութիւնները, և Պետ. Դուժայի օրինադրի մէջ արուած փոփոխութիւններն ու լրացումները ընդունելով ընդհ. ժողովը որոշուել է, Պետ. Խորհրդի օրինադրքի 49 յօդ. համեմատ, օրինագիծը յանձնել առանձին յանձնաժողովի, որ պէտք է կազմուած լինի Պետ. Խորհրդի և Պետ. Դուժայի 7 ական անդամներից ըստ ընտրութեան այդ հաստատութիւնների:

Ոչ-ատենական օրերի քիւր կրեւսեղու համար կարգուած Յանձնաժողովի որոշումը: (Церк. Вѣст. № 45).

Ոչ-ատենական և դպրոցական արձակուրդների օրերը օրէնքը փոխելու նոր օրինագիծ կազմելու համար Պետական Խորհրդի կարգած առանձին յանձնաժողովը նոյեմբերի 1-ին, Ստատս-սեկրետար Ա. Ս. Երմոլովի նախագահութեամբ ունեցաւ իւր վերջին նիստը. Յանձնաժողովը մշակել է ոչ-ատենական, և կիսա-ատենական օրերի համար (այն է, երբ ծառայութիւնը սկսւում է ժամերգութիւնից յետոյ) հետեւեալ օրինագիծը.

Յանձնաժողովը ոչ-ատենական օր ենթադրում է համարել կայսերական տօնակատարութեան օրերը, որոնք յիշուած են օրէնքի մէջ [ст. 25 уст. пред. прест. изд. 1890 г.] կիրակէ օրերը (52 օր) յունիսի 1 և 6, մարտի

25, օգոստոսի 15, սեպտեմբերի 8, դեկտեմբ. 25 և յունվարի 6., չարչարանաց շաբթի ուրբաթը, Զատիկի երկուշաբթին, և Յիսուսի Համբարձման օրը, ընդամենը 71 օր, այսինքն այժմեան ոչ-ատենական օրերից 22 օր պակաս: Կիսաատենական օր յանձնաժողովը ենթադրում է համարել 7 օր. այն է. փետրվարի 2, օգոստոսի 6, սեպտեմբերի 14, նոյեմբերի 21, դեկտեմբերի 6, (օրպէս Ս. Նիկողայոս Սքանչելագործի տօն) և չարչարանաց շաբթի՝ հինգշաբթի և շաբաթ օրերը: Իսկ ինչ վերաբերում է դպրոցական արձակուրդի օրերին, յանձնաժողովը կարծում է, թէ բաց ի վերի յիշուած օրերից՝ լրացուցիչ տօնացուցակ կազմելու իրաւունքը պատկանում է զանազան հաստատութիւնների դպրոցական վարչութիւնների գլխաւորներին:

ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿ ԵԿԵՂԵՅԻ

Հռովմ.-կաթոլիկական գաղտնի դպրոցների համար ներքին Գործերի նախարարութեան շրջաբերականը.

(Церк. Вѣст. № 47)

Օտարադաւանների հոգեւոր գործերի Դեպարտամենտը ուղարկել է Հռովմ.-կաթոլիկ արքեպիսկոպոսներին և եպիսկոպոսներին շրջաբերական, որի մէջ ցոյց է տալիս, թէ նախարարութեան մէջ տեղեկութիւն կայ, որ Հռովմ.-կաթոլիկ հոգեւորականութիւնը կաթոլիկ մանուկների համար մասնաւոր տներում գաղտնի դպրոցներ է պահում: Ի նկատի ունելով, որ այդպիսի դպրոցները առանց վարչական իշխանութեան թոյլտուութեան են, օտարադաւանների դեպարտամենտը այդ բոլոր դպրոցները համարում է ապօրինի, և դրանք վերաբերում են արգելուածների կարգին: Այդ դպրոցներում դաստառու մասնաւոր անձերը պէտք է ենթարկուեն օրինական պատասխանատուութեան: Կաթոլիկ մանուկներին հաւատապատում սովորեցնելը թոյլ է տրւում բացառապէս կասեռներում (լեհական եկե-

ղեցի)։ Այս մասին առաջագրում է եպիսկոպոսներին ազազդարարել հռովմ. -կաթոլիկական թեմերի կոեօնզներին (քահանաներ)։ Կաթոլիկ մանուկներին հռովմ. -կաթ. եկեղեցու դաւանութեանը վարժեցնելու համար հոգե. Գործերի Դեպարտամենտը առաջագրեց հռովմ. -կաթ. արքեպիսկոպոսներին ու եպիսկոպոսներին, յայտնելու դեպարտամենտին հետեւեալ տեղեկութիւնները.

1. Հաւատապատում սովորող մանուկներին հասակը.
 2. Ի՞նչ լեզուով է աւանդում այդ ուսմունքը.
 3. Աւանդող հաւատապատումի դասընթացքի ծրագիրը.
 4. Տարուայ որ ժամանակին է մանուկներին հաւատապատում աւանդում.
 5. Որքան ժամանակ է շարունակում, և
 6. Ինչ կանոնական հիմք կայ այդ տեսակ ուսմունքի համար։
- Այս խնդիրները քննելով են Ռուսաստանի բոլոր հռովմ. -կաթոլիկների մետրոպոլիտ Վ. Կլիւշինսկու գումարած կաթոլիկ եպիսկոպոսների խորհրդում։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

Անգլիական եկեղեցու բարձր հագեւորակոմուքեան ժողովը. (Церк. Вѣст. № 47).

Անգլիական եկեղեցու բարձր հոգեւորականութեան ժողովը, որ պէտք է դումարուէր յուլիսին, տեղի է ունեցել նոյեմբ. 21-23-ին, ն. տ.։

Ժողովը վճռական կերպով դէմ է եղել եկեղեցին Ուէլսում պետութիւնից բաժանելու ձգտումին, որ առաջ են մղում ազատամիտները։

Ժողովը ձայների բացարձակ առաւելութեամբ փորձիկ փոփոխութեամբ ընդունել է Լոնդոնի եպիսկոպոսի հետեւեալ բանաձեւը.

«Եկեղեցական ներկայացուցիչների ժողովը յայտնում է իւր բողոքը եկեղեցին պետութիւնից բաժանելու և Ուէլսի

չորս թեմերի եկեղեցիները ստացուածքից ղրկելու դէմ և դատապարտում է որպէս անարդար և ոչ-բարի գործողութիւն-ազգային եկեղեցու անջատումն և գոյքերի վերաւումն և աշխարհային պէտքերի համար գործադրութիւնը այն ստացուածքի, որ տրուած են կրօնական նպատակներին և յատկապէս զրա անհրաժեշտ պէտքերի համար»:

Այս բանաձեւին ժողովը աւելացրեց և հետեւեալը,

Ժողովը յորդորում է եկեղեցու բոլոր անդամներին, գործ դնել բոլոր օրինակոն միջոցները, խանդարելու մտադրուած ձգտումը որ սպառնում է օրէնք դառնալ և յարգանքով խնդրել արքեպիսկոպոսներին ու եպիսկոպոսներին, որ նրանք որպէս եկեղեցու առաջնորդներ, իրանց թեմերում և ընդհանրապէս երկրում այնպիսի քայլեր անեն, որ ամենից յաջող կերպով կարողանային խափանել «բիւր»:

Արժարժուել են ժողովում եկեղեցու գրամական, քարոզչական և եկեղեցական որոշ ժողովներին կանանց մասնակցութեան խնդիրները, որոնք դրական որոշումն են ստացել:

Ժողովը ցանկութիւն է յայտնել, որ Անգլիայի բոլոր եկեղեցւորների անդամների մէջ միութիւնը ամրանայ աւելի ևս, որ եկեղեցին կարողանայ միացեալ ուժով վառտակել:

«Անգլիական եւ արեւելեան պրատեստանտ եկեղեցիների միութեան քնկերութեան» քարեկան ժողովը.

(Церк. Вѣст. № 45).

Հոկտեմբերի 27-ին, ն. տ. «Անգլիական և Արեւելեան Պրատեստանտ եկեղեցիների ընկերութիւնը» տօնել է իւր սկզբնաւորութեան հինգերորդ տարեդարձը:

Ինչպէս հաղորդում է «Guardian» նոյն օրը մատուցուել է հանդիսաւոր սլաութարար Ս. Կօլումբի եկեղեցւում, ուր Պերսի Գիրմեր քահանան քարոզ է խօսել ճշմարիտ կաթողիկէ եկեղեցու մասին բնաբանով.

Գործի սկսելով ժողովը պրատեստանտների կողմից նոյնից նախադահ է ընտրել Վիլնի արքեպիսկոպոս Ագաֆանգելին, իսկ անգլիացիների կողմից՝ Գիբրալթարի հան-

գուցեալ Կօլլինզի տեղ՝ Երուսաղէմի եպիսկոպոս Բլեադս-ին (Blyth): Երեկոյեան 8 ժամին, Սիւն Կօլլէժում տեղի ունեցաւ հրապարակական ժողով, ուր արեւելեան յոյն և ուրա եկեղեցիներին այցելող անգլիացի հոգևորականները հրճուանքով են պատմել իրանց տպաւորութիւնները: Ժողովի վերջում գլխաւոր քարտուղարը յայտնել է, որ ընկերութեան մէջ մտել են նոր 430 անդամներ:

ԲՈՂՈՔՍԿԱՆ ԵԿԵՂԵՅԻ

Դօրսմունդի Աւեստաւանական բունդի ժողովը

(Լերք. ԵՖԵՐ. № 45)

Հօկտեմբերի 7-8 ն. տ. Դօրսմունդում տեղի է ունեցել Էփերմանական աւետարանական շահերը պաշտպանելու աւետարանական բունդի 24 ժողովը: Ինչպէս միշտ, հակակաթոլիկական այս մաքառող կաղմակերպութեան հռետորները շատ խօսեցին բողոքականութեան նշանակութեան մասին գերման ազգութեան համար. ինչպէս միշտ, կոչ արին եռանդով աշխատել ամրացնելու և զարգացնելու աւետարանական սկզբունքները, գլխաւորելու ոչ-գերմանացի տարրերի ձեռքով անդր-լեռնականութեան տարածուելուն: Բոլոր բողոքականների ամեն տեսակ եկեղեցական և քաղաքական ուղղութեան գաղափարական միադիմալ ուժով պէտք է մաքառել ընդդէմ՝ մատերիալիզմի և անդրալեռնականութեան, ահա բունդի նպատակը, բունդի ղեկավարողներից մէկի—Էփերլինզի—ասելով Պիոս Ժ-ի, մօտիկ օրերումս, անդրլեռնականութիւնը դօրացնելու ձեռնարկութիւնը պատճառ դարձաւ, այս անգամ էլ ընդերքատների ու ճատերի մէջ անդրլեռնականութեան դէմ՝ մաքառումն առաջնակարգ խնդիր դարձներ:

Այս անգամ ժողովի ղեկավարողները կաթոլիկների նման քաղաքի փողոցներով թափօր օտարեցին: Սակայն բողոքական այս ցոյցը շատ էլ տպաւորիչ չեղաւ, թափօրին մասնակցում էին ընդ ամենը 12 հազար աւետարանական մշակներ, ժողովում դահլիճեամբ նկատուեց, որ վերջին տարին բունդի անդամների թիւը շատ մեծացել է. 1910 թ. ապրիլի 1-ից մինչև 1911 թ. ապրիլ 1-ը բունդի մէջ մտել են 70 հազար նոր անդամներ, իսկ բունդի բոլոր անդամների թիւը 470 հազար մարդ է հաշուում:

Յուսիկ Արքիպ.